

Թ Ո Ւ Թ Ե Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ

ՏԵՏՐ ԸՕԳՆՍԻԲԵԿԵՆ ԲԵՐՈՅԵԿԵՆ

ԵՒ ԶՈՒՆԸՆԴԻ ԳԻՏԵԼԻԵՑ

ՕԳՈՍՏՈՍ 1	1860	ԹԻԻ 3
ՀՐԱՏԻՑ 19	ՌՅԹ	ՏԱՐԻ Ա

ՀԱՅՈՑ Լ.Ե.ԶՈՒ

(Հարո՜ւստի՛ւ-Բի՛ւս ԿԵ՛ն ԲԻ- 2)

“ Ի՛կ կողմանէ կը ցաւիմ Հայոց վիճակի՛ն
վրայ, մանաւանդ իրենց ապերախտու-
թեանցը վրայ . որ ուրիշ երկիրներ գաղթելով, բոլո-
րովին իրենց ազգութիւնը, բարքը, ու լեզունին
կորսնցուցին . իսկ միւս կողմանէ կ'ուրախանամ, որ
այն գաղթականաց մէջ ճշմարիտ Հայրենասէրներ ալ
գտնուելով, ամէն ջանք 'ի գործ դրին Հայոց ազգու-
թիւնը ու լեզուն պաշտպանելու համար :

“Ուրե՛մն ո՛վ Լեւակործան բաջին Հայկայ զաւա-
կո՛ւնքը, ձեր օտարասիրութիւնը մէկգլի թողլով, Հայ-

րենասիրութեան ջահը ձեր սրտերուն մէջ վառեցէ՛ք ու սկսեցէ՛ք ամէն մէկերնիդ ազգօգուտ բաներու հետեւիլ, որ լարկնից Բարցրեալը իւր ամէնաուտ ոգնութեամբը ձեր սրտերը զօրացնէ և զգաստացնէ, որպէս զի ամէն մէկերնիդ Միջին մէկ մէկ օգնական հիմեր ըլլաք. Ղշմարիտ կ'ըսեմ որ ձեր Հայրենասիրութեան համբաւը բոլոր աշխարհք պիտի տարածուի:

«Մարդս ինչով կրնայ պարծիլ. հայրատութեամբ ո՛չ. ինչու որ՝ ոսկին, արծաթը, ակը, մարգարիտը, պատուական պատմութեանները կ'այրին, կը մաշին, կը փրտտին, կը կոտորին, ու ցեցերու կերակուր կ'ըլլան փառօք, ո՛չ. ինչու որ՝ Աղէքսանդրայ նման շատ փառասէր թագաւորներ իրենց փառքն ու գահը թողլով գացին. գեղեցկութեամբ, ո՛չ. ինչու որ՝ երբ հոգին մարմինէն կը բաժնուի, գեղեցկութեան պզտիկ նշոյլն անգամ չի տեսնուիր մարդու մարմնոյն վրայ. զօրութեամբ, ո՛չ. ինչու որ՝ Գողթաթայ նման բաղմաթիւ հսկաներ անզօր մնացին իրենց թշնամացը առջև:

«Հապա ինչով կրնայ մարդս պարծիլ. հայրենասիրութեամբ, այո՛, հայրենասիրութեամբ. վասն զի մարդըս կանցնի առանց աշխարհիս երջանկութիւնները վայելելու, բայց իւր ազգը կը մնայ մինչ ցվերջ: Այո՛ միայն հայրենասիրութեամբ մարդս կրնայ պարծիլ, վասն զի աշխարհիս պարգևած երջանկութիւններն անցաւոր են. միայն առաքինութեան երջանկութիւնն է որ կը մնայ միշտ և յաւիտեան:

«Առաքինի մարդը՝ կը սիրէ իւր Հայրենիքը, կ'ողորմի իւր ազգակցացը, գութ կ'ունենայ իւր ազգին վրայ, իւր ձեռքէն եկած բարիքը կ'ընէ, և միշտ կը ջանայ որ իւր ազգը ուրիշներէն Մեծ կոչուի. ընդհակառակն ազգուրայ մարդը՝ միշտ իւր ազգը կը պարտաւէ, և իւր՝ հայրենիքը ունեցած պարտքը ա-

մէնեւին միտքը չի բերելով, աւելի օղբին հետ կը սիրահարի բան թէ իւր հայրենիքին :

«Աստա՛հ եղիք, որ իրենց արիւնը Հայրենեաց համար թափող անձինքը անանկներուն դէմ՝ Երկնից Բարցրելոյն պիտի բողոքեն ըսելով թէ «ահ ս' ասոնք են այն վատ և ապերախտ մարդիքը, որ մեր, և Հայկազեան ցեղին ու Քրիստոսեան հօտին անուանը նսեմութիւն բերելու, և անոր համբաւը եղծելու պատճառ եղան», և վրէժխնդիր պիտի ըլլան, որ անոնք՝ իրենց հայրենիքը սւրանալով, օտարացան ու բոլորովին ոջնջացան : Աստա՛հ եղիք դուք, ո՛վ Հայրենասէր Հայք, որ անանկները օր մը լէ՛շէ, օր մը իրենց պատիժը պիտի առնեն երկնից բարցրելը նստող Լակէն :

«Եթէ այս ազգատեաց անձինքը դատարարակուծ թիւն ունեցած ըլլան, իրենց Հայրենիքը ուրանալով այնպիսի չեն պարտաւեր գանի, վասն զի դատարարակեալ անձինքը կը ճանչնան որ իրենց պարտքն է ազգերնին սիրել, մինչև անգամ անձերնին Հայրենեաց համար զոհել :

«Յիրաւի Մատուած մարդս անասուններէն նախապատիւ համարելով անոնց վրայ իշխող կարգեց, բայց ես կրնամ ըսել թէ՛ հայրենատեաց մարդիկը անասուններէն տարբերութիւն մը չունին, որպէս զի իրենց պարտքը մոռնալով, մարդկութեան նախապատուութիւնը կը կորսնցունեն, և կ'ըլլան անասնոց հետ հաւասար :

«Ուրեմն կը յորդորեմ զձեզ ո՛վ սիրելի Հայազգիք, որ ամէնքնիդ մէկ հոգի, մէկ սիրտ ըլլալով, սկսեցէ՛ք ձեր Մտուածապարգև լեզուն ձեր մէջը տարածել, որ ձեր ազգը ու լեզուն ամէնեւին չ'ոջնջուի, որ օրէ օր զարգանայ ու պայծառանայ, որպէս

զի ուրիշներն ալ ձեր վրայ բարի նախանձ ունենան :
 Միաբանութիւնը ամրացուցէ՛ք ձեր մէջը , եթէ կ'ուզէ՛ք որ աշխարհիս վրայ խաղաղութեամբ կեանք վարէ՛ք , բայց գիտցէ՛ք՝ որ առանց սիրոյ միաբանութիւնն ալ անհիմն կ'ըլլայ . կը նմանի աւազի վրայ հիմնեալ տան մի , որ ամէնէն ջնջին հողմն անգամ կարող է զանի կործանելու : Ձեր նախնիքը իրենց մէջ միաբանութիւն ունէին , վասն զի ո՞վ չ'ուզեր որ իր ազգը չի սպառնաւանայ , չի զօրանայ . բայց իրենց մէջ սէր չ'ունենալուն համար , պատճառ եղան իրենց Հայրենիքը աւերակ դարցընելու , վասն զի իրարու վրայ նախանձելով մէկզմէկ կը հալածէին , իրարու դէմ սպառնալով կ'ելլային , զիրար կը վանէին , զուր տեղը բազմութիւ զօրք կը չարդուէին , որոնցմով մեր սիրելի Հայրենիքը տակն ու վրայ կ'ընէին , ուստի չ'է թէ միաբանութեան պակասութիւնն էր որ Հայաստանի բռնակիւքը ցիրուցան բռաւ , այլ սիրոյ պակասութիւնը անոր համար ջանացէ՛ք որ միաբանութիւնն ու սէրը ձեր մէջը ամրացընէ՛ք . ու սկսեցէ՛ք ամէնքն(դ ալ ձեր Մատուածապարգեւ լեզուէն խօսիլ , որով մեր տրբամեալ սրտերը , գոնէ ձեր վրայ քիչ մը մխիթարութիւն գտնան :

(պիտի շարունակուի)

Երիցականաց Մետաքեր անուն լրագրին 1467 թուոյն մէջ Պալատու գերեզմանի դէպքին վրայ հետեւալ յօդուածը կը կարդանք , որովհետեւ մեզմէ շատ քիչեր զանի կարդալու առիթը ունեցած են , ուստի արժան կը համարիմք ամբողջ հոս դրել ու անկէ վերջը պետք եղած խորհրդածութիւններն ընել որով կարող ըլլան ազգայինք ալ յայտ յանդիման տեսնալ իւր խօսքերուն ինչ աստիճան անտեղի ու անիրաւ ըլլալը :

Մարդ մը մեռնելէն ետեւ իրեն համար բան մը չ'է կամ ինչո՞ք թաղուած ըլլալը . իր մարմինը անզգայ է , ու ան-

տարբեր իրեն համար յարգանքն ու անյարգանքը : Այս մարմինը չուտով հող պիտի դառնայ , ու մինչև անգամ իրեն ամենէն սոստիկի կատաղութեամբ զայրացած թշնամին ալ չի կրնար անոր փաս մը հասուցած ըլլար ինչ ալ որ ընէ :

«Իսկ որչափ որ աս ասանկ ալ է , տակաւին բնական զգացում մըն է ամեն կենդանի մարդուն՝ բաց 'ի ամենացած վիճակի հասնող հեծանոսներէն , որ պատուաւորներուով իրենց մեռելը թաղելու կը փափաքին : Ահաւն սիրտը չի տանիր մինչև անգամ ասանկ բան մը երեակայեւ թէ իր մեռնելէն ետեւ իր մարմինը երկրին երեսին վրայ պիտի ձգուի . ճիշտ մը դիակին պէս , կամ ոտքի տակ թաղուի ճամբու մէջ , կամ պիղծ ու ապականեալ տեղ մը , կամ առանց սղաւոր բարեկամներուն ներկայ գտնուելուն իր տխուր յուզարկաւորութեանը ու վայելուչ կրօնական պաշտօնի : Իսկ ինչպէս , որ աս բանը ամեն մէկը իր անձին համար կ'ուզէ , անանկալ պարտքն է կորցածին չափ ալ նոյնը ուրիշին համար ուզել , ինչ որ կ'ուզենք որ ուրիշները մեզի ընեն , մենք ալ անոնց անանկ ընելու ենք :

«Իրութիւնն ու կրօնքը նոյն խրատը կ'ուտան մեզի որ մեռելին պատշաճ յարգանք մը տրուի , անոր կրօնական զաղափարը ինչ ալ որ ըլլայ : Ահաւմ մարդը մեր ընկեր արարածն է , մեր եղբայրը , անիկայ թող ըլլայ որ Մահմետական է , կամ Հրէայ , և կամ թէ կաթոլիկ , տակաւին մէկ Մատուած մը ստեղծած է մեզ , և մեռնողը մեր եղբայրն է . անիկայ աս աշխարհէս ելած ու յաւիտենական աշխարհը մտած է Մտուած մէ ընդունելու իր գործքերուն համար , ինչ որ աս աշխարհիս մէջ ըրած է :

«Եւ ատ խորունկ ու փափուկ մտածմունքներ գրաւելու են մեր սրտերը . մեռնողին սիրելի բարեկամները կ'ողբան անկէ բաժնուելուն վրայ , մենք ալ համակրութիւն ունենալու ենք անոնց զգացումներուն , և աս համակրութիւնիս հանդարտ և ծանր վարմունքով մը ցոյց տալու ենք յուզարկաւորութեան , ան , երբ մեռելը մեր առջեւն է կ'անցնեն :

«Բարի մը յարուցանելով յուզարկաւորութեան մը թշնամական նախատինք և բռնական գործ մը կատարելէն և մեռելին վայելուչ կերպով թաղումը արգիլելու ջանքէն աւելի մարդ կուրծեան դէմ մէծ նշան մը անկարելի է ցոյց տալ : Ասանկ բանի մասնակցութիւն ընելու ոտք ելլալը՝ ժողովուրդին ամենէն դոնհիկ ու բարոյականէ զուրկ կարգէն ելողը փայն կրնայ ըլ-

լալ : Բոլոր քաղաքակրթեալ աշխարհը բարցրածայն կը բողբօքէ ասանկ մ'ընդունեան զէմ որ բարբարոսութիւն կ'ըսուի :

“Բոլոր աս գիտողութիւնները պիտի տեսնուի որ վերաբերութիւն ունին անցած շաբթուան պատահած վերջին աստիճանի ամօթալից տեսարանի մը , որ Պոլսոյ Պալատէ թաղը մեռնող Հայ Բոսթիմեանքի մը յուղարկութեանը կա տարուեցաւ . չորս օր մեռելը մնաց հողին երեսը , անոր համար որ հաղարաւոր հողիէ բաղկացեալ ամբողջ մը գերեզմանը դիզուելով արդիւրէն էին անոր թաղուիլը : Ահապաշտալի բան է որ Առաքելական Հայոց ազգին պատուաւոր մասը առ ամբողջին ըրածներուն համակրութիւն ունեցած ըլլայ . ապա վրայ հաջէն խօսելու պատահածութիւն պիտի տեսնանք :

“Երբ ատենը սա ալ ըսենք որ ատ հողին մէջ թաղելու իրաւունքը չ'է թէ հաղարաւոր հողներէ ժողովուած ամբողջի մը ձեռքով որոշուելու է , այլ լիովին և անաշտ քննութիւն մը ընելով , առ խնդիրն վրայ հեղինակութիւն ունեցող յատուկ գաղափարական ատենի առջև ,

Մարդ մը մեռնելէն ետեւ , կ'ըսենք , իրեն համար բան մը չ'է ուր կամ ինտոր թաղուած ըլլալը . . . : Խիստ բարի . ես ալ ձեզի կը համաձայնիմ այդ մասին . բայց հետեաբար ալ պիտի խօսքերնիք է որ զձեզ կը դատէ . կը ներքէ եթէ հարցնենք թէ անտեսն այդ խորհրդածութիւնները ինչո՞ւ չ'ըրիք , ու մեռելը առնելով չի տարիք ուրիշ տեղ մը թաղելու . միթէ անոր համար նոյնը չ'էր որ հոն թաղուելու տեղը ուրիշ տեղ մը թաղուէր , որով այսքան դժտութիւններ ծագելու պատճառ չ'էիք ըլլար . միթէ մինչև ան ատեն չ'էիք գիտեր թէ մարդ մը մեռնելէն ետեւ ուր կամ ինտոր թաղուիլը անտարբեր է իրեն համար . թէոր դիտէիք , ինչո՞ւ ասանկ շնչին բանի մը համար այսչափ խռովութեանց պատճառ եղաք . միթէ ձեր Լեւտարանը ասանկ կը սովորեցընէ ձեզ . միթէ Քրիստոս “գիտովութիւն իմ տամ” ձեզ , կամ “այս է պատուէր իմ զեւտեսչիք զմիմեանս” , ըսաւ ձեզի . բայց ո՞չ , սո ալ չ'է , ուրեմն ի՞նչ էր մտքերնիդ :

Չեր գրութեանէն կը հետեւի թէ բնական զգացմամբ մը դրդեալ , մեռեալը պատուաւոր կերպով թաղելու փափաքովն էր այսքան ընդդիմութիւնները . բայց և այնպէս կրնայիք մեռեալը ուրիշ գերեզման մը թաղել և դարձեալ պատուաւոր կերպով . իսկ թէոր Հայոց գերեզմանը միայն թաղելով պատ-

ուսուր կերպով պիտի ըլլար , ուրեմն մինչև ցայժմ ուրիշ գե-
րեղմաններու մէջ թաղուած անձինքը անարգութեամբ թաղ-
ուած էին . անանկ ալ որ ըլլայ , դարձեալ մեզի չի վերաբերիր
(Դադարձը Գ-ն Եւրէի)

Խ Ե Ն Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խնայող կին , է մեծագնի .

Իւր ծանրութեամբն արժէ ոսկի :

Խակ կին վատնիչ , կին չարամիտ ,

Որպէս հաւն , ածող հաւկիթ ,

Միշտ անդադար խռովութիւն ,

Ա՛րնէ տան մէջ , և շառաջիւն :

Լըրոր լեզուն , շատ կ'աշխատի ,

Ձեռքն ալ գործքէ կը դադարի :

ԼՅՐ հեղգասիրտ , այր ապաշան ,

ԵՅՐ արբեցող , այր գինեճան ,

Բիւր կործանումն ածէ ինքեան ,

Թէ աստ 'ի կեանս , թէ 'ի վախճան :

ԼՅՍ կը պատահի խեղճ տան մ'ալ գլխուն ,

Թէ տան տիկինը չ'է անտես արթուն .

Բի տուն մը որ չ'է լաւ կառաւարուած ,

Համարէ զանի արդէն կորսուած :

Վ շան զի ուր անհոգութիւն ,

Ենդ յաջորդէ կարօտութիւն :

ՎԵՍՔ է ամէն բանի համար ,

Բաւ զատ տեղեր յատկացընել .

Եւ ամէն բան տնմիջապէս ,

Ուսկից առիւ հոն դարցընել :

ՎԵՍՔ է տղայքը վարժեցընել ,

Եմէն բանի մէջ խնայութեան .

Այս աւերի դիւր է սովորիլ ,
 Բանթէ վարժիլ շոյայլութեան :
 Պղտիկ ծակը մեծ տակառ մը ,
 Բնմիջապէս կը պարպէ .
 Այնպէս փոքրիկ շոյայտութիւն մը ,
 Դանձեր անգամ կ'սպառէ :
 Խոյայլութիւն է օգտակար հարստին ,
 Յոյժ պիտեան և կարևոր աղքատին :

Յ. ԲԱՅԵԼԵԱՆ

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

- 1 Սիրով կ'ընդունուին որ և իցէ հրատարակուելու յօդուածներ՝ բայց ո՛չ առանց ստորագրութեան : Ինչու որ հեղինակին գրածներէն 'իզատ' որ և իցէ յօդուած մը շ'ի պիտի հրատարակուի առանց ստորագրութեան :
- 2 Ուզողը կրնայ որ և իցէ յօդուած մը խրկել իր ստորագրութեամբը , և եթէ ուղէ՛ միայն սկզբնատառերով կամ աստղանշանով կը հրատարակուի :
- 3 Հեղինակին ուղղուած որ և իցէ նամակ՝ մեծ նոր խանի վերի դրանը մէջ 6 թիւ (նշխրցասիրաց ընկերութեան գրասենեակը խրկուելու է :
- 4 Այս տետրակը 15 օրը անգամ մը կը հրատարակուի , ամէն ամսոյն 1ին և 16ին :
- 5 Օրագրոյս տարեկան գինն է Չմեռուան Իրիկուններ պատմութեանը հետ մէկ տեղ կանխիկ 80 դահեկան :
- 6 Ստորագրութեան տեղին է առ այժմ (նշխրցասիրաց ընկերութեան գրասենեակը :

ՇԱՐԵԳԻՐ—ՏԵՕՐԷՆ

Ա. Մ. ՀԻՒՍԵՅԻՆՃԵԱՆ

ՏՊԵԷԼ Ի ՎՈՍՏԵՆԴԵՆՈՒՊՕԼԻՍ
 Ի ԳՈՐԾԱՐԵՆԻ ՆԴԻՐՏՏԻ ՀԵՒԵՏԻՍ ԼԵՐԻՐՈՑ







